



Զահրատ

Այսպէս ամէն առաւօտ

Այսպէս ամէն առաւօտ

Հրաժեշտ կ'առնեն կը բաժնուին ես ինձմէ

Տանս դուռը երբ կը փակեն ետեւէս

Գիտեն թէ

Եսս ներսն է ես ամէն քայլ գիս կ'անջատէ իմ եսէս

Այսպէս ամէն առաւօտ

Հրաժեշտ կ'առնեն կը բաժնուին ես ինձմէ

Կը խառնուին ուրիշներով շինուած հսկայ ծովուն մէջ

Ու կը տեսնեն պատուհանին ետեւէն

Եսս կեցեր գիս կը դիտէ մտատանջ

Իսկ ես եմէն առաւօտ

Կ'երթամ ձուլուիլ ուրիշներով շինուած հսկայ ծովուն մէջ

Մինչդեռ եսս պատն երեսին նստեր կու լայ ետեւէս

Հրաժեշտ կ'առնեն կը բաժնուին ես ինձմէ

Առաւօտուն ես մանաւանդ առաւօտուն դժբախտ եմ